

## ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԸ\*

ՀԵՐԻՔՆԱԶ ՈՐՄԿԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ անհատական-գրավոր հանելուկներ, Ա. Մնացականյան, Ն. Շնորհալու, Հայոց պատմություն, Տիրատուր վարդապետ, Հովհ. Ծործորեցի, Անանուն, Ազաթանգեղոս, Փ. Բուզանդ, Մ. Խորենացի, Արծրունի, Գանձակեցի:

### Նախաբան

Հայ միջնադարյան գրականության ինքնատիպ ժանրերից մեկի՝ հանելուկների անհատական-գրավոր խմբի հավաքման և հետազոտման ուղղությամբ անգնահատելի աշխատանք է կատարել Ասատուր Մնացականյանը՝ ի մի բերելով V–XVIII դդ. հանելուկները՝ գրված 40-ից ավելի հայտնի ու անհայտ հեղինակների կողմից<sup>1</sup>:

Ունենալով գործնական-կիրառական ուղղվածություն՝ հանելուկներն իրենց մեջ արտացոլում են ժամանակի հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին վերաբերող բազում իրողություններ և ունեն կրթական նպատակադրում: Ա. Մնացականյանի կազմած ժողովածուն հնարավորություն է տալիս կատարելու խորքային եզրահանգումներ յուրաքանչյուր հեղինակի հետապնդած նպատակի ու ժանրի ընկալումների վերաբերյալ՝ հետևելով հանելուկների հարուստ ժառանգության զարգացման ընթացքին: Այս առումով առանձնահատուկ նշանակություն ունեն Հայոց պատմության առնչվող հանելուկները, մանավանդ որ ժողովրդական հանելուկների շարքում դրանք բացակայում են<sup>2</sup>:

### Ներսես Շնորհալու և Տիրատուր վարդապետի հանելուկները

Հայոց պատմության թեմաներով առաջին հանելուկների հեղինակը XIII դ. հասարակական-եկեղեցական նշանավոր գործիչ, միջնադարյան հայ գրականության խոշորագույն ներկայացուցիչ Ներսես Շնորհալին է:

Ըստ արժանվույն գնահատելով Շնորհալու հանելուկները՝ Մ. Աբեղյանը հիշատակում է հայոց պատմությանից երեք կերպարներին՝ վերաբերող հանելուկները՝ «Վարազդատ», «Տորք», «Տրդատ»՝ առանց, սակայն, որևէ վերլուծության ենթարկելու դրանք<sup>3</sup>:

Փ. Այնթաբյանը իր «Ներսես Շնորհալու անտիպ հանելուկները» հոդվածում բանաստեղծի հանելուկների նոր շարքը ևս, որում ընդգրկված էին բազ-

\* Ներկայացվել է 04. V. 2022 թ., գրախոսվել է 11. V. 2022 թ., ընդունվել է տպագրության 26. V. 2022 թ.:

<sup>1</sup> Մնացականյան. 1980:

<sup>2</sup> Հարությունյան. 1985:

<sup>3</sup> Աբեղյան. 1946, 95:

մագան թեմաներով հանելուկներ, գնահատում է իբրև «հետաքրքիր երևույթ մեր մատենագրության պատմության մեջ՝ թե՛ ձևով և թե՛ բովանդակությամբ»<sup>4</sup>։ Նա առանձնացնում է Աղթամարին նվիրված հանելուկը՝ արձանագրելով, որ նրանում արտահայտվել է հեղինակի վերաբերմունքը պատմական այդ սրբավայրի նկատմամբ։ Հետագայում պարզ է դառնում, որ հանելուկի հեղինակը Շնորհալին չէ, և այն XV–XVI դդ. ստեղծագործություն է<sup>5</sup>։

Շնորհալու հայոց պատմությանն առնչվող հանելուկներին առավել հանգամանորեն է անդրադարձել Գ. Հակոբյանը՝ «Ներսես Շնորհալի» մենագրության մեջ։ Շեշտը դնելով այդ հանելուկների գաղափարական բովանդակության վրա՝ ուսումնասիրողն ընդհանրացնում է. «Ինչպես իր մի շարք ուրիշ գործերում, այնպես էլ հանելուկների մշակման բնագավառում Շնորհալին հետևել է մեր հայրենասեր պատմիչներ Խորենացու, Ագաթանգեղոսի, Բուզանդի, Փարպեցու, Նղիշեի և մյուս մատենագիրների լավագույն սովորություններին և ստեղծագործության առարկա դարձրել հայոց պատմության մեջ նշանավոր անձանց՝ ժողովրդին հայրենասիրության ոգով դաստիարակելու նպատակով»<sup>6</sup>։

Անշուշտ, ժողովրդին հայրենասիրական ոգով դաստիարակելու հարցադրումն էական է Շնորհալու պարագայում, ով դեռևս 1121 թ. գրած պատմաքաղաքական վիպաքերթվածում՝ «Վիպասանության» մեջ, նպատակ էր դրել վերաբարձել անցյալի հերոսական ոգին, արտահայտել երախտագիտությունը նախնիների հանդեպ, ներկայացնել նրանց լավ ու վատ գործերը, նոր սերնդին տողորել հայրենասիրությամբ։

Նկատենք նաև, որ Շնորհալու հանելուկները ներքին միասնություն են կազմում նրա գրական ժառանգության հետ՝ ըստ թեմաների առնչվելով տարբեր գործերին։ Հայոց պատմության գործիչների դեպքում ականհայտ է կապը «Վիպասանության» հետ։

Զպետք է անտեսել կարևոր մի հանգամանք ևս. Շնորհալու ձեռագրերն ընդօրինակողները ջանասիրաբար պահպանել են հանելուկների ներքին հաջորդականությունը։ Ա. Մնացականյանը նկատել է միայն մասնակի վրիպումներ, որոնք սպրդել են շարքի մեջ։ Միջնադարյան գրիչները, ըստ ամենայնի, ընկալել են հանելուկների Շնորհալու կողմից դասակարգված լինելու սկզբունքը։ Թեև Շնորհալուց առաջ գրվել են հանելուկներ, սակայն նա առաջինն է, ով կատարում է թեմատիկ խմբավորում։ Ա. Մնացականյանն ընդգծում է երևույթի պատմական բացառիկ արժեքը և նշում, որ Շնորհալու դասակարգման եղանակից օգտվել են նաև նրա հաջորդները<sup>7</sup>։ Ուսումնասիրողն առանձին տախտակով ներկայացնում է Շնորհալու հանելուկների խմբերը՝ ըստ պատասխան-խորագրերի։ Այդ խմբերի դիտարկումը թույլ է տալիս եզրակացնելու, որ Շնորհալին ի սկզբանե մտահղացել է ստեղծել հանելուկների շարք ըստ Արարչագործության ընթացքի՝ երկինք ու երկիր, բույսեր, կենդանական աշխարհ և մարդ։ Սրանով է պայմանավորված դրանց թեմատիկ բազմազանությունը։ Առարկայական ցանկը կապված է Աստծու արարչության, ապա՝ Հին և Նոր կտակարանների հերոսների հետ՝ առանց խախտելու հերթագա-

<sup>4</sup> Ա. յ ն թ ա բ յ ա ն. 1951, 61։

<sup>5</sup> Տե՛ս Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. 1980, 133–136։

<sup>6</sup> Հ ա կ ո բ յ ա ն. 1965, 240։

<sup>7</sup> Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. 1980, 89։

յությունը: Սրանով էլ գուցե բացատրություն է գտնում բանասիրության մեջ տարածված տարակուսանքը, թե ինչպես է, որ հայոց հայրապետը իրեն թույլ է տվել գրել հանելուկներ, այն էլ՝ մեծ մասամբ ռամիկ լեզվով<sup>8</sup>:

Թյուրմբունումների տեղիք է տվել հավանաբար նաև պատմիչ Կիրակոս Գանձակեցու նկատառումը, թե՛ «... արար և առակս խորհրդաբարս ի գրոց, և հանելուկս, զի փոխանակ առասպելեաց՝ զայն ասասցեն ի գինարբուս և ի հարսանիս»: Տպավորություն է, որ Գանձակեցին մտավախություն ունի, թե ճիշտ չի ընկալվի Շնորհալու կերպարը, որովհետև անմիջապես շարունակում է. «Եւ էր ինքն հեզ ամենայնիւ և պարկեշտ, արժանաւոր այրն Աստուծոյ»:

Գանձակեցին խոսում է հանելուկների՝ միայն կիրառական, գործնական նշանակության մասին: Նա չի անդրադառնում հանելուկների մտահղացմանը, ակունքին: Շնորհալին, ում աշխարհընկալումը պայմանավորված էր Աստվածաշնչով, հանելուկների նախապես ծրագրված ամբողջական շարքով նպատակ է ունեցել քրիստոնեական պատվիրաններից աստիճանաբար հեռացող մարդկանց դյուրին ու մատչելի եղանակով ուսուցանել սուրբգրային պատմությունը, ճանաչելի դարձնել նկարագրվող հերոսներին: Անգամ հաջորդ խմբերը, որոնք վերաբերում են մարդկանց կենցաղավարությանը, առօրյայի հետ կապված տարբեր առարկաներին, կենդանիներին, թռչուններին ու միջատներին, շարքում ներառված են նույն միտումով՝ ճանաչել Աստծու կողմից արարված ամեն ինչ և դա անել առանց պարտադրանքի, ուրախության ու զվարճության ժամանակ:

Շնորհալու հանելուկների շարքում երկու տարբեր խմբի մեջ են մտնում հայոց պատմության թեմաներով հանելուկները: Առաջինը՝ «Տորք», «Վարագդատ», «Տրդատ» հանելուկաշարը, կապվում է նախաքրիստոնեական չրճանի և IV դ. հետ, երկրորդը՝ «Գրիգոր Լուսավորիչ», «Դաւիթ Անհաղթ», «Քերթող», քրիստոնեական հավատի ու մշակութի հետ կապվող խումբն է:

Գաղափարական ի՞նչ նպատակադրում է ունեցել Շնորհալին հանելուկներ ի շարքում ներառելով այս կերպարներին:

«Վիպասանության» նախադրության մեջ Շնորհալին հետևում է հայ պատմագրության ձևավորած ավանդույթին. Խորենացուց սկսած՝ հայ ժողովրդի ծագումնաբանությունը բխեցվում էր Նոյ Նահապետի Հաբեթ որդուց, ապա գալիս հասնում մինչև Հայկ: Շնորհալին արտահայտում է իր կրոնա-աստվածաբանական մտքերը Սուրբ Երրորդության երեք անձերի, աշխարհի արարչագործության, դրախտի, Ադամի ու Եվայի, նրանց պատվիրադանցության, Նոյի փրկվելու մասին, ապա անցնում է հայ ազգի ծագմանը, հասնում Հայկին, «Յորմէ և Հայք մեք անուանեալ»<sup>9</sup>, հետո սկսվում է բուն վիպերգությունը Հայկ Նահապետի Բելի դեմ տարած հաղթանակի փառաբանումով: Նույնը հանելուկների պարագայում է. «Աստված, Ադամ, դրախտ, երկինք ...», ապա հասնում է Տորքին և մյուսներին: Արդյո՞ք ազգային արմատների ընդգծման գիտակցության նույն զգացումով են հորինվել հանելուկները, ինչպես որ հյուսվել են «Վիպասանության» տողերը: Ի՞նչ իմաստավորումով է Շնոր-

<sup>8</sup> Տե՛ս Հ ա կ ո բ յ ա ն. 1965, 221:

<sup>9</sup> Գ ա ն ձ ա կ ե ց ի. 1961, 147:

<sup>10</sup> Շ ն ո Ր հ ա լ ի. 1981, 48:

Հային տարբեր ազգերին կերպավորող խումբն սկսում «Հայն»<sup>11</sup> խորագրով հանելուկով, որն էլ իր հերթին խորհրդանշական ձևով եզրափակում է վերը նշված երկու խմբերը:

Փորձենք գտնել հարցերի պատասխանները՝ քննության առնելով, թե վիպական դրվագներով հարուստ կենսագրություն ունեցող անձերի կերպարները գծելիս մասնավորապես ո՞ր հատկանիշներն են գրավել հեղինակին, որոնք նա փորձել է ներկայացնել հանելուկի սեղմ տողերում՝ պահպանելով ժանրի՝ իր իսկ ձևավորած առանձնահատկությունները:

Տորքի կերպարը հանելուկում գեղարվեստական մարմնավորում է ստացել ըստ Մ. Խորենացու «Հայոց Պատմության»: Երկրորդ գրքի Ը գլխում Խորենացին շարադրում է Տորքի պատումը և չթաքցնելով իր քննադատական մոտեցումը սուտ, հորինված առասպելների հանդեպ՝ գծագրում է նրա կերպարը. «Իսկ զայր խոժոռագեղ և բարձր և կոպտարանձն և տափակաքիթ, խորակն և դժնահայեաց, ի գաւակէ Պաքամայ, ի Հայկայ թոռնէ, Տուրք անուն կոչեցեալ, որ վասն առաւել ժահադիմութեանն ձայնէին Անգեղեայ, վիթխարի հասակաւ և ուժով, հաստատէ կուսակալ արեւմտից. և յերեսացն անպիտանութենէ կոչէ զանուն ազգին Անգեղ տուն: Բայց եթէ կամիս՝ ստեմ և ես յաղագս նորա անյաջ և փցուն, որպէս և Պարսիկք վասն Ռոստոմայ Սագճկի հարիւր և քսան փղոց ոյժ ասեն ունել: Քանզի կարի իմն անյարմար թուէին և նմա երգ բանից վասն ուժեղութեանն և սրտեայ լինելոյն. որք ոչ Սամսոնի և ոչ Հերակլեայ և ոչ Սագճկին յարմարին այս զրոյցք: Քանզի երգէին նմա բուռն հարկանել զորձաքար վիմաց ձեռօք, ուր ոչ գոյր գեղութիւն, և ճեղքել ըստ կամաց մեծ և փոքր. և քերել եղնգամբքն և կազմել որպէս տախտակ, և գրել նոյնպէս եղնգամբք իւրովք արծուիս և այլս այսպիսիս: Եւ յեզեր ծովուն Պոնտոսի դիպեալ նաւաց թշնամեաց՝ դիմէ ի վերայ. և ի խաղալն նոցա ի խորն իբրեւ ասպարէզս ութ, և սա ոչ ժամանեալ նոցա՝ առնու, ասեն, վէմս բլրաձևս, և ձգէ զկնի. և ի սաստիկ պատառմանէ ջուրցն ընկղմին նաւք ոչ սակաւք, և ամբարձումն ալեացն, որ ի պատառմանէ ջուրցն, վարէ զմնացեալ նաւսն բազում մղոնս: Ո՛հ, կարի է առասպելս, այլ և առասպելաց առասպել: Բայց քեզ զի՞ է. քանզի էր արդարեւ սաստիկ հզօր և այսպիսեաց զրուցաց արժանի»<sup>12</sup>:

Խորենացու հանգամանալից նկարագրության ազդեցությամբ Շնորհալին կերտել է Տորքի վիպական կերպարը, ընդգծել նրա առասպելական ուժը.

Մանուկ մի կայր ի Հայք գովան,  
Քան զՍամսոն այլ յաղթական,  
Վէմ մի վերոյց մեծ տրամական,  
Ի ծովն ընկեց, կանգնեաց արձան<sup>13</sup>:

Համեմատությունը ցույց է տալիս, որ Շնորհալին կատարել է երեք հիմնական փոփոխություն.

<sup>11</sup> Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. 1980, 89: ԺԲ շարքի դիմաց գրված «Հույն» բառը վրիպակ է: Պետք է լինի «Հայն»:

<sup>12</sup> Խ ո Ր Ե Ն Ա ց ի. 1991, 114–115:

<sup>13</sup> Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. 1980, 228 (այսուհետ հանելուկների էջերը կնշենք տեքստում մեջբերմանը կից):

1. Խորենացու շարադրած պատումների փոխարեն հորինում է քարաժայռը ծովի մեջ որպես արձան կանգնեցնելու դրվագը,

2. Խորենացու Տորքը հիշեցնում է Հոմերոսի «Ոդիսականի» միականի Պոլիփեմին<sup>14</sup>, մինչդեռ Շնորհալին նրան համեմատում է ոչ թե կիկլոպի, այլ Սամսոնի հետ,

3. Շնորհալու հանելուկում որևէ ակնարկ չկա Տորքի տգեղ, կոպիտ արտաքինի մասին:

Ստեղծագործական այս փոփոխությունները, ըստ ամենայնի, Շնորհալին կատարել է հետևյալ նկատառումներից ելնելով.

1. բոլորին քաջածանոթ դրվագներից կերտել է ընդհանրացված պատկեր՝ ապահովելու հանելուկի ժանրային կարևոր առանձնահատկություններից մեկը՝ ոչ թե անմիջապես, այլ մտավարժությամբ, մտքի ճկունությամբ պատասխանը կռահելու հանգամանքը,

2. Տորք-Սամսոն գուգահեռով կերպարին հաղորդել է Աստվածաշնչային երանգ. գերբնական ուժով հսկան հայտնի էր իր սխրանքներով,

3. յաղթական, մանուկ, գովան բառերը տեքստում կատարում են կերպարը դրական գծերով օժտելու գործառնություն:

Շնորհալու այս հանելուկին անմիջապես հաջորդում է Արշակունյաց Վարազդատին նվիրված հանելուկը, որտեղ գրում է՝ «ի յայս նման», այսինքն՝ Տորքի նման մի ուրիշն էլ կա.

Մանուկ մի այլ՝ ի յայս նման,  
Էր ի յազգէն Արշակունեան,  
Հանչաք մանուկ էր ու իշխան՝  
Ընդ Եփրատ վազեաց քայլ մի լման (Էջ 229):

Շնորհալու «Վիպասանություն»՝ Վարազդատին նվիրված հատվածն<sup>15</sup> արտացոլում է Խորենացու պատումը<sup>16</sup> դրվագ առ դրվագ վարպետորեն դրված բանաստեղծական տողերի մեջ. դուրս են մնացել միայն այդ դրվագների մաս կազմող փոքր նկարագրությունները: Մինչդեռ հանելուկում Շնորհալին առաջին տողում նախընտրել է շեշտել միայն նրա երիտասարդ, քաջ և ուժեղ լինելը՝ համեմատելով Տորքի հետ, իսկ երկրորդ տողում նշում է, որ Արշակունյաց տոհմից է: Հենվելով Խորենացու պատմության վրա՝ Շնորհալին կարծես ներքին անհամաձայնություն է հայտնում Բուզանդին, ով գրում է Մամիկոնյանների մեղադրանքի մասին՝ ուղղված Վարազդատին, թե՛ Արշակունի չէ, որին հետևում է Վարազդատի պատասխանը. «Եւ քանզի չեմ Արշակունի, զի եղի զթագ նախնեաց իմոց Արշակունեացն, և կալայ զաշխարհ առաջնոց իմոց, և խնդրեցի զվրէժ հօրեղբօրն իմոյ Պապայ ՚ի չարագործ յեղբօրէն քումմէ ՚ի Մուշեղայ, բայց զի դու չես յաշխարհէս յայսմանէ ...»<sup>17</sup>: Բուզանդը թեև Վարազդատին արիասիրտ ու քաջ է համարում, բայց մի քանի անգամ շեշտում է, որ նա թեթևամիտ է, մանկամիտ:

<sup>14</sup> Էջ 15. 1886, 71, տե՛ս նաև Ա. Բ. Ե. Կ. Կ. 1899, 279–280:

<sup>15</sup> Տե՛ս Շնորհալի. 1981, 93–94:

<sup>16</sup> Խորենացի. 1991, 307–309:

<sup>17</sup> Բիւզանդ. 1889, 248:

Հանելուկի երրորդ տողը, որտեղ մանուկ և իշխան բառերը կիրառվել են նույն տիրույթում, միայն դրական վերաբերմունք է ձևավորում Վարագդատի հանդեպ և կարծես բանաստեղծորեն վերարտադրում խորենացու ձևակերպումը, թե երիտասարդության քաջագործություններից հարբել էր. «... արբեալ ի մանկութեանն արութիւնս»<sup>18</sup>: «Վիպասանության» մեջ էլ Վարագդատի արարքը՝ հունաց չհնազանդվելը, Շնորհալին վերագրում է նրա երիտասարդ լինելուն՝ «մանկաբար անմտացեալ»<sup>19</sup>:

Թեև խորենացին գրում է, որ Վարագդատը Տրդատի նման քաջագործություններ է արել, և թվարկում է մի քանիսը, այդ թվում Օլիմպիական մրցամարտում հաղթելը, բայց Շնորհալին ընտրում է կամուրջը քանդած Եփրատի վրայով անցնելու պատումը՝ «Ընդ Եփրատ վազեաց քայլ մի լման»՝ իբրև ամենաարտասովորը ունկնդրի համար: Խորենացին գրում է, որ ասորիները, որոնց Վարագդատը հալածում էր, տեսնելով նրա Եփրատի վրայով վազելով թռչելն ավելի քան քսաներկու կանգուն, զարհուրած հանձնվում են նրան. «Իսկ նոցա անցեալ ընդ նեղուցս կամրջին Եփրատայ՝ ընկեցին զփայտն զկնի իւրեանց. այլ նորա հասեալ վազեաց զԵփրատաւ առաւել քան զդակոնացին՝ Քիոնեայ վազսն քսան և երկուց կանգնոց չափ: Եւ անդ էր տեսանել նոր զոմն Աքիլլեա ընդ Սկամանդրոս գետ վազելով: Յորմէ զարհուրեալ աւազակացն՝ զէնընկէց լինելով ի ձեռն եկին»<sup>20</sup>:

Հաջորդ հանելուկը նվիրված է Արշակունի Տրդատ Գ-ին, ում օրոք Հայաստանում քրիստոնեությունը դարձավ պետական կրոն.

Թագուհոր մի կայր, աչուին էր խաժ,  
Ժամ մի՝ ժանի ունէր ու բաշ.  
Սինօռ ունէր ինչւի Մարաշ,  
Ամէնքդ ասէք իւրեանն վա՛շ (էջ 229):

Հանելուկի առաջին երկու տողերը հիշեցնում են Ագաթանգեղոսի պատմության մեջ շարադրված դեպքերը, երբ սուրբ Կույսերի նահատակությունից հետո Տրդատը բաբելոնացիների նաբուգոդոնոսոր արքայի նման վայրի խողի կերպարանք է ստանում<sup>21</sup>: Այդ իրադարձությունները Շնորհալին պատկերավոր նկարագրել է իր «Վիպասանության» մեջ՝ «Ի խող յեղափոխեալ» Տրդատի մասին գրելով.

Քարամբք զանձինս կոչկոճեալ  
Եւ ատամամբք պատառեալ<sup>22</sup>:

Նույն «դիւաբախեալ» կերպարն է հիշեցնում հանելուկի երկրորդ տողը՝ «Ժամի մի», այսինքն՝ մի ժամանակ Տրդատի՝ ժանիք ու բաշ ունենալն ականարկելով: Նկատենք, որ ի տարբերություն Վարագդատի՝ այս դեպքում չի խու-

<sup>18</sup> Խ ո Ր Ե Ն Ա Գ Ի. 1991, 308:

<sup>19</sup> Շ Ն Ր Հ Ա Լ Ի. 1981, 94:

<sup>20</sup> Խ ո Ր Ե Ն Ա Գ Ի. 1991, 308:

<sup>21</sup> Պատմութիւն Ագաթանգեղայ. 1862, 164:

<sup>22</sup> Շ Ն Ր Հ Ա Լ Ի. 1981, 75:

սափում թագավոր բառից, հակառակը, մտերմիկ, խոսակցական «թագուոր» ձևի կիրառումով ընդգծում է թե՛ իր համակրանքը, թե՛ Տրդատի՝ մարդկանց համար սիրելի լինելը: «Թագուոր» ձևը թույլ է տալիս բառն ընկալել ոչ միայն ուղիղ, այլև փոխաբերական իմաստով (հիշենք, օրինակ, «թագավոր տղա» արտահայտությունը), և կերպարի՝ առաջին ու երկրորդ տողերում կերտված հակադիր մարմնավորումները՝ գեղեցիկ, խաժ աչքերով պարթևահասակ արքայի ու վայրի խոզի, մեծապես ուժեղացնում են տպավորությունը լսողի մոտ, իսկ պատմությունը չիմացողին՝ մղում կարդալու այն:

Թվում է, թե երրորդ տողը պիտի կառուցվեր հայոց դարձի քրիստոնեություն ընդունմանն առնչվող այլաբանական հենքի վրա: Մի որոշում, որի համար խորենացին Տրդատին անվանում է «նախաշաւիղ ճանապարհ և լուսաւորութեան մերոյ հայր երկրորդ»<sup>23</sup>: Բայց դրանով կանխատեսելի կլիներ կերպարը, և կռահումը՝ դյուրին: Շնորհալին, քաջածանոթ հայոց պատմութեանը, ներկայացնում է Տրդատին բոլորովին այլ գործերով, մասնավորապես՝ նշում է, որ երկրի սահմանները հասցրել է մինչև Մարաշ: Շնորհալին գեղարվեստորեն արտացոլել է Մեծ Հայքի թագավորության միասնական տարածքի ճանաչումն ու վերականգնումը Մծքինի դաշնագրով (298 թ.)<sup>24</sup>:

Չորրորդ տողով Շնորհալին արժևորում է Տրդատի անգնահատելի գործերը Հայաստանի քաղաքական պատմության մեջ՝ չթաքցնելով իր հիացմունքը:

«Վարազդատ», «Տրդատ» խորագրերով հանելուկներ է գրել Տիրատուր վարդապետը (XIV դ.): Նրանից մեզ հասած քաաներկու հանելուկների մեջ հայոց պատմության թեմաներով փոքրիկ խումբն ամբողջանում է «Արշակ», «Երուանդ» հանելուկներով: Չորս հանելուկները հաջորդում են իրար: Դեռ Ալիշանն է նկատել, որ Տիրատուր վարդապետը հետևել է Շնորհալու լեզվին ու գրվածքին<sup>25</sup>: Ակներև է, որ հանելուկների պատմական անձերի ընտրության հարցում էլ է նա հետևել Շնորհալուն, միայն Տորքի փոխարեն կերպավորել է Արշակին: Վերջինիս վերաբերյալ հանելուկը տեղադրելով «Վարազդատ», «Տրդատ» հանելուկներից հետո՝ Տիրատուրը հանելուկի առաջին տողն սկսում է հետևյալ սկզբածքով՝ «Գիտեմ քաջ մ'այլ նախնի սոցին»՝ հուշելով, որ Արշակը նախորդել է Վարազդատին ու Տրդատին: Տորքի փոխարեն Արշակ Ա ընտրությունը հետաքրքիր է կերպարների նմանության առումով. Պոնտոսի ափին նիզակը որձաքարի մեջ մեխելու դրվագը հիշեցնում է Տորքի շալտած քարաժայռը, որն արձանի պես կանգնել էր ծովում:

Գիտեմ քաջ մ'այլ նախնի սոցին,  
Որ ի Պոնդոս յեզր ի ծովին  
Զմխեալ նիզակն իւր գերկսայրին  
Ի խոր նստոյց յորձաքարին (էջ 373):

Հանելուկի աղբյուրը խորենացու պատումն է. «Արշակ որդի Վաղարշակայ թագաւորէ ի վերայ Հայոց ամս երեքտասան, նախանձաւոր և հետևող հայրե-

<sup>23</sup> Խորենացի. 1991, 246:

<sup>24</sup> Հայ ժողովրդի պատմություն. 1984, 70:

<sup>25</sup> Տե՛ս Ալիշան. 1869, 124:

նեացն լեալ առաքինութեանց՝ բազում կարգս ուղղութեան գործեաց. պատե-  
րագմելով ընդ Պոնտացիս, և նշանակ եթող յեզեր ծովուն մեծի. գնիզակն իւր,  
ասեն, զբոլորատէգ, որ էր արեամբ զեռնոց մխեալ, ձգեալ ի հետեակուց՝ խորա-  
գոյնս նստոյց յերկանաքար արձանին, զոր կանգնեաց ի ծովեզերն»<sup>26</sup>:

Համեմատությունից հստակորեն երևում է, որ Տիրատուրը որևէ ջանք չի  
գործադրել «չեղելու» ունկնդրին և պարզապես բանաստեղծականացրել է  
պահը: Պատմությանը տեղյակ ունկնդիրը կամ ընթերցողն անմիջապես կա-  
րող է կռահել պատասխանը: Իսկ Շնորհալու մոտ, օրինակ, Տորք-Սամսոն  
գուգահեռը, որը հակառակ է խորենացու բնագրին, չփոխության մեջ է դնում  
ընթերցողին:

Քաջ ու գովասանքի արժանի հաղթանդամ հսկա է Տիրատուրի Վարագ-  
դատը, որին բնութագրելու համար նա ընտրել է Եփրատ գետի վրայով  
քսաներկու կանգուն թռչելու դրվագը, ինչպես՝ Շնորհալին.

Այն քաջին ի՞նչ ասեմ ես գով,  
Որ յաղթանդամ էր հասակով.  
Զինուք վազեց նա զԵփրատով՝  
Զքսաներկու կանգնոյ չափով (էջ 373):

Թեև խորենացին գրում է, որ Վարագդատը հաջորդել է Պապ թագավո-  
րին<sup>27</sup>, Տիրատուրը չի նշում նրա թագավոր լինելը: Այդ շեշտադրումը չկա  
նաև «Վարագդատ», «Տրդատ» հանելուկներում:

Տրդատի պարագայում Տիրատուրը գծագրում է նրա կատարած քաջագոր-  
ծությունները կրկեսամարտում, որն առաջ է բերել հանդիսատեսի հիացումը.

Կայր քաջ մի այլ նման սմին,  
Որ յԵլլադա ի կրկեսին  
Թափեաց զեղջիւր երկու ցլին  
Եւ զարմացումն հանդիսին (էջ 373):

Տիրատուրը, ըստ էության, վերապատմում է խորենացուց քաղած պա-  
տմը՝ դուրս թողնելով կառքը կանգնեցնելու դրվագը. «... իսկ սա գերկուց  
ցլուց վայրենեաց միով ձեռամբ կալեալ զեղջերէն, թափեաց հանդերձ ընդ-  
վզեալ ջախջախմամբ: Եւ ի ձիւնթացս մեծի կրկիսին կառավարել կամեցեալ՝ ի  
հմտութենէ հակառակորդին ոստուցեալ յերկիր անկաւ, և բուռն հարեալ արգել  
զկառան. ընդ որ ամենեքին զարմացան»<sup>28</sup>:

Երեք հանելուկների դիտարկումը՝ իբրև մեկը մյուսին հաջորդող միավոր-  
ների, թույլ է տալիս եզրակացնել, որ Տիրատուր վարդապետի համար կարևոր-  
վել է հանելուկների հերոսներին, գործող անձանց ներկայացնելը իբրև քաջ ու  
հզոր դուցազունների, որոնց ֆիզիկական գործւթյունն առաջ է բերում  
անաքող հիացում: Երեք հանելուկներն էլ ունեն քաջերի գովքը պարունակող,

<sup>26</sup> Խ ո Ր Ե Ն ա ց ի. 1991, 118–119:

<sup>27</sup> Խ ո Ր Ե Ն ա ց ի. 1991, 307:

<sup>28</sup> Խ ո Ր Ե Ն ա ց ի. 1991, 218:



նրանց քաջ լինելը չեչտող նույն սկավաժքը՝ «Այն քաջին ի՞նչ ասեմ ես գով», «Կայր քաջ մի այլ նման սմին», «Գիտեմ քաջ մ'այլ նախնի սոցին»: Նրանց հակադրվում է Երվանդի կերպարը, որի ուժն ու զորությունը գովեստի արժանի չի դառնում:

Ոմն էր յազգէ Արշակունի,  
Մայրն վաւաչ և խիստ մոլի.  
Տեսումն աչացն էր անբարի,  
Հանց որ յաղթէր որձաքարի (էջ 374):

Խորենացին Երվանդի մասին գրում է «Հայոց պատմութեան» երկրորդ գրքի ԼԷ–ԽԶ գլուխներում: Տիրատուրը Երվանդի կյանքից հիշատակում է երկու դրվագ. մեկը՝ մոր անբարո լինելը, որի համար Խորենացին ասում է, թե Արշակունյաց ցեղից պառաված, տգեղ ու վավաչոտ այդ կինն ապօրինի խառնակութեամբ է ծնել երկու զավակներին՝ Երվանդին և Երվադին<sup>29</sup>, մյուսը՝ Երվանդի՝ անգամ որձաքարը ճեղքող աչք ունենալը: Սրա մասին Խորենացին գրում է, որ Երվանդը հմայքով չար աչք ուներ, և սպասավորներն ստիպված են եղել ամեն առավոտ որձաքարեր բռնել Երվանդի առաջ, որոնք հայացքի չարությունից պայթել են<sup>30</sup>:

Հետաքրքիր է Երվանդին հանելուկի թեմա դարձնելու մտահղացումը: Խորենացու բնորոշմամբ՝ դիվական զորություն ունեցող Երվանդը, անշուշտ, չէր կարող դրական կերպար ընկալվել, և դա արտացոլվել է հանելուկի հենց առաջին տողում. ոմն Արշակունի անվանելով Երվանդին՝ Տիրատուրը նկատի ունի, որ նա թեև արքայական տոհմից էր, սակայն թագի օրինավոր ժառանգը չէր: Երվանդի ծավալած քաղաքաշինության մասին դրվատանքով է գրում Խորենացին, բայց Տիրատուրը չի անդրադառնում դրան: Նրա նպատակը վերջինիս ուժը ընդգծելն է և ընթերցողի մոտ որոշակի վերաբերմունք ձևավորելը երեք քաջագունների և Երվանդի կերպարների համադրությամբ:

Ի՞նչ խնդիր է լուծում Շնորհալին.

1. առասպելական ուժով օժտված նրա դյուցազունները ձևավորում են սեփական ժողովրդի տարերային, բայց գորավոր ուժն ու ոգին:

2. Այդ կերպարների հանդեպ պատմիչներն ունեն որոշ կանխակալ վերաբերմունք:

Խորենացին առասպելների առասպել է համարում Տորքի մասին պատմվող շատ զրույցներ, Բուզանդը բազմիցս չեչտում է Վարազդատի թեթևամտությունը, Ագաթանգեղոսը Տրդատի կերպարում քրիստոնեության ընդունման փաստի առաջ երկրորդում է նրա քաջագործությունները իբրև գորավարի ու քաղաքագետի:

Այն տպավորությունն է, որ Շնորհալին իր հանելուկներում փորձել է զերծ պահել նրանց կերպարները հակասական ըմբռնումներից:

Շնորհալու այս ինքնատիպ մտածողությունն ուղիղ համեմատական է «Վիպասանություն» գաղափարական նպատակադրումին՝ ճանաչել նախնինե-

<sup>29</sup> Խ ո Ր Ե Ն ա ց ի. 1991, 162:

<sup>30</sup> Խ ո Ր Ե Ն ա ց ի. 1991, 167–168:

րին, իմանալ նրանց լավ ու վատ գործերը: Հանելուկների պարագայում կերպավորելով առասպելապատմական հերոսներին՝ Շնորհալին մատենագրական հենքի վրա կատարել է նրբին վերաիմաստավորումներ՝ գեղարվեստական պատկերներով, պարզ, մատչելի խոսակցական լեզվով մարդկանց հիշողության մեջ ամրացնելով նրանց տեղն ու դերը հայ և համաշխարհային պատմության էջերում: Հատկանշական է, որ Շնորհալուց հետո՝ երկու դար անց, Տիրատուր վարդապետը ընկալում է նրանց իբրև դյուցազունների, որոնք իրենց քաջագործություններով փառավորել են ազգի անցյալը:

Շնորհալուն՝ հայոց պատմության առնչվող հանելուկների երկրորդ խումբը վերաբերում է հոգևոր-մշակութային կյանքի երախտավորներին: Բնական է, որ այս շարքը պիտի գլխավորեն Գրիգոր Լուսավորիչը, ով սկիզբ դրեց հայ ժողովրդի լուսավորությանն ու հոգևոր-բարոյական վերելքին: Նրա գործը լավագույնս է գնահատել իտրենացին՝ իբրև համեմատության եզր ընդունելով Սաղմոսի արտահայտությունը. «... երանութեան և շինութեան հոգևորի առիթ, աստուածային արդարեւ արմաւենի տնկեալ ի տան Տեառն և ի գաւիթս Աստուծոյ մերոյ ծաղկեալ»<sup>31</sup>:

Շնորհալին Լուսավորչի մասին գրել է երկու հանելուկ: Երկուսն էլ ներկայացնում են նրա կենսագրությունից դրվագներ, որոնք հետաքրքիր են, տպավորիչ: Առաջին հանելուկը հորինված է կենսագրական այն հենքի վրա, որ որպես թե Գրիգորը եղել է երկու ֆիզիկական և հոգևոր հայրերի որդի.

Երկու հօր էր նա որդի,  
Մինն՝ չուն ու անբարի,  
Մինն՝ սուրբ՝ և առաքինի,  
Ինք յետոյ եղև հովիւ բարի (էջ 247):

Անհնարին թվացողը կուհելի է դառնում նրանց համար, ովքեր ծանոթ են Լուսավորչի ծագման ու ծնունդի վերաբերյալ պատմություններին: Խորենացին վկայում է, որ նա Պարթևական աշխարհից էր, Պահլավների գավառից, Անակ անունով հորից<sup>32</sup>: Շնորհալուն «Մինն՝ չուն ու անբարի» բնութագրումը վերաբերում է Անակին, ով, հրապուրվելով Արտաշիռի խոստովից՝ թե Պահլավը նորից նրան կվերադարձնի և թագով կփառավորի, հանձն է առնում և սպանում է իտարովին<sup>33</sup>:

Հանելուկի երրորդ տողի սուրբ և առաքինի բառերը բնութագրում են Լուսավորչի հոգևոր հորը՝ Եվթաղիոսին, ով Կեսարիայում սնուցում ու քրիստոնեական հավատի մեջ կրթում է պահլավիկ երեխային<sup>34</sup>, ում, ըստ Ագաթանգեղոսի, փախցրել էին Հռոմաց կողմերը<sup>35</sup>:

<sup>31</sup> Խ ո Ր Ե Ն Ա Գ Ի. 1991, 245:

<sup>32</sup> Խ ո Ր Ե Ն Ա Գ Ի. 1991, 245:

<sup>33</sup> Խ ո Ր Ե Ն Ա Գ Ի. 1991, 203: Այս առիթով իտրենացին հիշատակում է Ագաթանգեղոսին և գրեթե նույնությամբ բերում նրա պատմածը (տե՛ս Պատմութիւն Ագաթանգեղայ. 1862, 36):

<sup>34</sup> Խ ո Ր Ե Ն Ա Գ Ի. 1991, 219–220:

<sup>35</sup> Պատմութիւն Ագաթանգեղայ. 1862, 41:

Արժանին գնահատելով կաթողիկոս և հովվապետ Լուսավորչի գործունեությունը՝ Շնորհալին գրում է. «Ինք յետոյ եղև հովիւ բարի»:

Երկրորդ հանելուկում, որը գետեղված է Շնորհալու անունով մեզ հասած մեկ այլ շարքում, համաձայն Ագաթանգեղոսի, նկարագրվում է Արտաշատ քաղաքի Խոր Վիրապում օձերին կերակուր դարձնելու համար Գրիգորին փակելու պատմությունը<sup>36</sup>: Հանելուկը կառուցված է միմյան վիրապի և Գրիգորի՝ Հայոց աշխարհի լուսատուի հակադրությունամբ, խավար-լույս եզրերի զուգորդումով:

Ոմն ընտրեցաւ յԱգամորդոց,  
Որ բնակեցաւ ի մէջ սողնոց,  
Կերակրեցաւ ի յանմարմնոց  
Եւ լուսատու եղև Հայոց (Էջ 326):

Հանելուկի երրորդ տողը գեղարվեստորեն խտացնում է Ագաթանգեղոսի պատումը, թե ինչպես է Աստծու հրամանով մի այրի կին ամեն օր նկանակ գցել փոսը. «Եւ զայն ամս երեքտասան որ եղև Գրիգորիոս ՚ի բերդին բանդին և ՚ի խոր վիրապին, կին ոմն այրի որ էր ՚ի բերդին յայնմիկ, հրաման առեալ յարհաւրաց զի աւուրն նկանակ մի արարեալ պատրաստական ընկենուլ ՚ի ներքըս ՚ի խոր վիրապին. և այնու կերակրեալ լինէր նա ՚ի հրամանէն Աստուծոյ զայն ամս որ եղև նա անդ»<sup>37</sup>: Քանի որ, ըստ Ագաթանգեղոսի, կինը երազում էր հրաման ստացել, Շնորհալին էլ գրում է. «Կերակրեցաւ ի յանմարմնոց»՝ պատմիչի նման ընդգծելով, որ Աստված ինքն է նախանշել Գրիգորի ճանապարհը և նրա ունենալիք դերը Հայոց աշխարհի համար:

Շնորհալին բացառիկ վերաբերմունք է ունեցել Սահակի և Մեսրոպի աշակերտների հանդեպ, ովքեր կրթություն են ստացել Հունաստանում, Խորենացու բառերով՝ երկրում, որը կարելի է անվանել գիտություն մայր կամ դայակ<sup>38</sup>: Աստվածային շնորհներով լցված ոսկեդարյան հայ մշակույթի այդ գործիչներից են Դավիթ Անհաղթը, Մովսես Խորենացին, որոնց նվիրված հանելուկները հաջորդում են «Գրիգոր Լուսավորիչ» խորագրով հանելուկին: Շնորհալին նրանց գործունեությանն անդրադարձել է նաև «Վիպասանություն» մեջ: Դավիթ Անհաղթի մասին գրում է.

Այս է Մովսէս Դաւթիւ եղեալ  
Եւ Մամբրէիւ այլք հետեեալ,  
Այնքան շնորհօք վերին լցեալ,  
Մինչ զի Յունաց գերազանցեալ<sup>39</sup>:

Հանելուկը հյուսված է ավելի մասնավոր բնութագրումների վրա.

Իմաստասէր մի՛ յԱթենաց  
Դ էր ի յազգէն Հայոց Մեծաց,

<sup>36</sup> Պատմություն Ագաթանգեղայ. 1862, 103–105:

<sup>37</sup> Պատմություն Ագաթանգեղայ. 1862, 105:

<sup>38</sup> Խ ո Ր Ե ն ա ց ի. 1991, 9:

<sup>39</sup> Շ ն ո Ր Հ ա լ ի. 1981, 97:

Խոսրովային ճառ մի ասաց,  
Զոր երես շատ վարդապետաց (Էջ 247–248):

Առաջին տողի լուծման բանաձևը Իմաստասեր մականունն է, բայց քանի որ այդ կոչումը տրվել է երաժշտական արվեստի մեջ հմտացածներին<sup>40</sup>, Շնորհալին հավելում է, որ նա կապված է եղել Աթենքի հետ: Հաջորդ հուշումը Խոսրովային ճառ ասած լինելու տեղեկությունն է, որով ակնարկվում է Գյուտ կաթողիկոսի խնդրանքով Դավիթ Անհաղթի գրած ինչի ճառը, որովհետև այն հորինված է Խոսրովային, այսինքն՝ քաղցր ու անուշ եղանակով:

Ալիշանը, իր «Շնորհալի և պարագայ իւր» աշխատության մեջ բացատրելով Խոսրովային եղանակով կամ ձայն ասելով նկատի են ունեցել լավ և ճարտար եղանակը, որ կապված է Սասանյան Խոսրով Փերվիզ կամ Ապրվեզ թագավորի օրոք այդ արվեստում կատարած կանոնակարգումների և տվյալ ուղղությունը զարգացնելու հետ, գրում է՝ այնուհետև Հայերն էլ են խոսրովային անվանել անուշ ու քաջարկատ եղանակները: Ալիշանը իբրև օրինակ բերում է Կիրակոս պատմիչի Շնորհալու գործերը բնութագրող տողերը. «Կարգեաց ... քաղցր եղանակաւ, Խոսրովային ոճով շարականս, մեղեդիս, տաղս և ոտանաւորս»<sup>41</sup>:

Հանելուկի հորրորդ տողը հիշեցնում է այն ավանդությունը, որ Դավիթ Անհաղթն Աթենքում բյուզանդական կայսրի ներկայությամբ խիստ գերազանցել է «չոր երեստ», հույն փիլիսոփաներին:

Հաջորդ «Քերթողն» խորագրով հանելուկը, որով եզրափակվում է այս խումբը, վստահաբար վերաբերում է Մովսես Խորենացուն.

Սիրելի՛, աւտա՛, լըսէ՛.  
Ի յայդ նըման մէկ մի այլ է,  
Զերդ յորդահոս աղբիւր բըխէ  
Ու ստոյգ ասէ գերդ մարգարէ (Էջ 248):

Մամբրե Վերծանողի, Դավիթ Անհաղթի և մյուսների հետ Հունաստանում բազմակողմանի կրթություն ստացած առաջադեմ մտածողը միայն իր խորաթափանց ու վերլուծող մտքով կարող էր հավասարվել և նմանվել Դավթին: Հենց դա է նկատի ունեցել Շնորհալին՝ «Ի յայդ նըման մէկ մի այլ է» տողով հուշելով, որ խոսքը նախորդ հանելուկի Դավթի մասին է: Հանելուկների միջև ստեղծվող այս կապը միտում ունի համեմատության եզրեր ստեղծելու կերպարների միջև: Բացի այդ, առաջին հանելուկի պատասխանը կռահած ընթերցողը կարող էր ինքն իրեն ստուգել նաև հաջորդ հանելուկի շնորհիվ գտնելով որոշակի կապ հերոսների ու նրանց գործունեության միջև: Այս առումով մտահղացման ինքնատիպ օրինակ է սիրելի բառի կիրառումը. ուղիղ իմաստով այն մտերմիկ դիմելաձև է՝ ուղղված ունկնդրին, այլաբանորեն՝ նախորդ հանելուկի «Դավիթ» պատասխանի հուշումը՝ Դավիթ–սիրելի, սիրեցյալ բառիմաստային նշանակությամբ<sup>42</sup>:

<sup>40</sup> Տե՛ս Ա լ ի շ ա ն. 1873, 91:

<sup>41</sup> Ա լ ի շ ա ն. 1873, 89:

<sup>42</sup> Տե՛ս Ա ճ ա ո յ ա ն. 1942, 22:

Հանելուկի երրորդ տողով Շնորհալին ակնարկում է ինքնացու «Հայոց պատմությունը», որովհետև շարունակում է, որ Պատմահայրը մարգարեի պես ճշմարտությունն է ասում: Այս համեմատության հիմքում ընկած է երկու Մովսեսների պատմությունների արժեքումը՝ «Հնգամատյանը»՝ իբրև մարդկության և հրեա ժողովրդի պատմության սկիզբ, «Հայոց պատմությունը»՝ իբրև հայ ժողովրդի ծննդաբանություն համաշխարհային պատմության մեջ:

Ակնհայտ է Շնորհալու այս հանելուկի ազդեցությունն Ալիշանի «Մովսէս Քերթովհայր Հայոց» հոդվածի վրա: Վերջինս նույնպես գծել է Մովսէս ինքնացու-Մովսէս մարգարե զուգահեռը՝ ինքնացուն անվանելով Քերթովհ: 1849 թ. «Բազմավեպ»-ում տպագրած հոդվածում ինքնացուն համեմատում է Մովսէս մարգարեի հետ. «Հայաստանի հնացեալ աւերակաց և հիմնայարկ մեհենաց վրայ կեցած՝ կը կանչէ մէկ Մովսէս մը Հայաստանի տխրագոյնաց եկեղեցեաց և մթացեալ վանորէից. մէկ Մովսէս մը՝ որ Հրէից Մովսէսին նման՝ իր ազգին ընդհանուր և ամենարուեստ վարդապետն է, ինքն ըլլալով պատմահարց ակնադիւր, ինքն բանաստեղծութեան վառիչ, ինքն ... ինքն մեր վարդապետաց վարդապետն, ինքն հնագէտ նաև մարգարէ, և այս ամէն անուններէ վեր յատուկ կոչմամբ ինքն Քերթովհայր Հայոց»<sup>43</sup>: Ալիշանը մեկնաբանում է, որ Մովսէսը Քերթով մականունը ստացել է Աթենքից վերադառնալուց հետո, ինչպես Մամբրեն՝ Վերծանող, Դավիթը՝ Անհաղթ, Ղազարը՝ Պատմագիր և Չարտասան, Աբրահամը՝ Հռետոր, ամենքը՝ «ըստ իւրաքանչիւր առաւելութեանց»: Ըստ Ալիշանի ինքնացին սկզբում քերթովության անվան արժանի գործի համար է կոչվել Քերթով, իսկ հետո՝ Քերթովհայր:

Շնորհալին, ինքնացուն ներկայացնելով դարերի ընթացքում վաստակած վերադիրով, վերստին գնահատում է նրա գործը, հորդահոս աղբյուրի պես հոսող նրա պատմությունը, որը, հավաստի ու ստույգ սկզբնաղբյուր լինելով, աչքի է ընկնում իր արվեստով:

Նաև ինքնացու «Հայոց պատմության» շնորհիվ է, որ Շնորհալին, ճանաչելով հայ ժողովրդի սկիզբը, նրա անցած ճանապարհը, նրա հերոսական ոգին, «Հայն» հանելուկով է սկսում տարբեր ազգերին վերաբերող թեմատիկ խումբը:

Քան զամենայն ազգ այլ ի վեր,  
Ազգ մի գիտեմ՝ հաւսար քաջեր.  
Հոռմանց ետուն շատ կըզու թեր,  
Եւ ասորիք՝ իւրենց խուլ էր (էջ 258):

Թեև «կըզու թեր» արտահայտությունն անհասկանալի է, սակայն հանելուկն ակնհայտորեն արտացոլում է հեղինակի հպարտությունը հայոց քաջերով, մանավանդ որ մյուս ազգերի դեպքում հանելուկներում չեղտադրումները երբեմն ծաղրական երանգ ունեն և հիմնականում առնչվում են կենցաղավարությանը:

Շնորհալին այս հանելուկով կարծես խորհրդանշական ձևով ամփոփում է հայոց պատմության թեմաներով իր հանելուկները:

<sup>43</sup> Ա. Լիշան. 1849, 51:

## Հովհաննես Ծործորեցու և Անանուհի Հանելուկները

Շնորհալու հետևողությամբ հանելուկներ հորինած հեղինակներից մեկը Հովհ. Ծործորեցին է (XIII–XIV դդ.): Լ. Խաչիկյանն ուշադրություն է դարձրել այն հանգամանքին, որ այս երկուսի հանելուկների նմանությունն այնքան ակնհայտ է եղել, որ մի քանիսը վերագրվել են Շնորհալուն և հրատարակվել նրա անունով<sup>44</sup>: Այդ հանելուկների լուծման առարկաները հիմնականում բնութային առնչվող երևույթներ են, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Պատմական թեմայով միայն մեկ հանելուկ ունի՝ «Մասիս» խորագրով: Այն իր սիմվոլիկ իմաստավորումով առնչվում է Շնորհալու՝ վերը քննված հանելուկներին և դրանցում արտահայտված մտահայեցությամբ՝ հայ ժողովրդի ծագումը համաշխարհային պատմության սկզբի մեջ տեսնելու առումով:

Ըստ Արարչին մեծ սահմանի,  
Նա բուրգն և հիմն է աշխարհի,  
Աստուածաշէն տանն է տեղի,  
Մարդկան ոտից անկոխելի (էջ 365):

Հանելուկի առաջին և երկրորդ տողերում արտահայտվել է ժողովրդական այն ըմբռնումը, որ Մասիսն աշխարհի «արգանդն» է: Սա այնքան տարածված է եղել, որ արտացոլվել է նաև հայ և համաշխարհային արվեստում, ուղեգրողների նկարագրություններում: Խնդրի շուրջ նյութերը հանգամանալից բացատրություններով և մեկնաբանություններով ի մի է բերել Վ. Դևրիկյանը<sup>45</sup>: Նա հիշատակում է Ռուբրուքի (XIII դ.), նաև Աբովյանի ուղեկցությամբ Հայաստանում ճանապարհորդած բարոն Փոն Հաքստհաուզենի վկայությունները, որ հայերը Մասիսն «աշխարհի մայր»<sup>46</sup> են անվանում: Իսկ Արարատի գագաթին աշխարհի «արգանդը» լինելու ըմբռնումն այս նույն մտքի ավելի խոր արտահայտությունն է: Այդ կապակցությամբ Վ. Դևրիկյանը հիշատակում է Մ. Թադևոսյանի բացատրությունը, որի ըմբռնումը կապված է Նոյյան տապանի՝ Արարատի գագաթին հանգրվանելու և ապա բացված տապանից մարդկանց ու կենդանիների դուրս գալու հետ<sup>47</sup>: Վկայակոչելով Խորենացու «յԱզատն ի վեր ի Մասիս, անդ կայցես և զլոյս մի տեսցես» տողերը, մովթ աշխարհ և բարի ազատում արտահայտությունները դիտարկելով նույն համատեքստում՝ Թադևոսյանը եզրակացնում է, որ Մասիսն «ազատն» է անվանվել, որովհետև բարով ազատվեց ու իր գագաթից նորովի ծնեց մարդկության երկրորդ կյանքը<sup>48</sup>:

1749 թ. արված փորագրանկարը, որ մանրակրկիտ նկարագրում և լուսաբանում է Վ. Դևրիկյանը, լավագույնս արտահայտում է Արարատի՝ աշխարհի մայրական արգանդը լինելու գաղափարը<sup>49</sup>: Փորագրանկարը կարծես Շնորհա-

<sup>44</sup> Տե՛ս Խաչիկյան. 1973, 198:

<sup>45</sup> Դևրիկյան. 2015, 97–115:

<sup>46</sup> Դևրիկյան. 2015, 101:

<sup>47</sup> Դևրիկյան. 2015, 101:

<sup>48</sup> Դևրիկյան. 2015, 103:

<sup>49</sup> Դևրիկյան. 2015, 102:

լու հանելուկի երկրորդ տողի՝ «նա բուրգն և հիմն է աշխարհի», պատկերային արտացոլումը լինի:

Հանելուկի առաջին և չորրորդ տողերի խմաստային փոխկապակցվածությունը խոսում է հեղինակի՝ Հովհ. Ծործորեցու ստեղծագործական մտահղացման մեկնակետի մասին՝ Արարատի անմատչելի ու սուրբ համարվելու հենքի վրա ունկնդրին հասցնել լեռան հոգևոր խորհուրդը:

Բարձր, երկնահաս Արարատ լեռն իբրև աշխարհի կենտրոն, երկնքի ու երկրի սահմանագիծն են ընկալել ոչ միայն հայերը: Դա հատկորեն երևում է լեռան մասին եվրոպացի ճանապարհորդների պատկերացումներում. նրանցից մեկի՝ Ջոն Ջոնսոնի բառերով՝ Արարատը երկինքն ու երկիրը միացնող ամենաբարձր կետն է<sup>50</sup>:

Լեռան անմատչելիության շուրջ տարածված են եղել մի քանի մեկնաբանություններ, որոնցից մեկի արձագանքն ենք գտնում «Մասիս» հանելուկում: Հանելուկի չորրորդ տողը ակնարկում է լուծման առարկայի անհասանելի լինելու հանգամանքը, բայց դա կապում է Նոյյան տապանի հետ, որովհետև երրորդ տողի «աստուածաշէն տուն» արտահայտությունը տապանի այլաբանական անվանումն է: Ծործորեցին հենվել է Բուզանդի պատումի վրա. հրեշտակը, Մծբնա սուրբ Հակոբին տալով մի մասունք Նոյյան տապանից, ցույց է տալիս այն տեղը, որից վերև մահկանացուն ոտք չափտի դնի<sup>51</sup>: Ստ. Մալխասյանցը ծանոթագրում է, որ տապանի իջած տեղը կոչվել է Արարատ, ինչպես որ գրված է Սբ. Գրքի հայերեն թարգմանության մեջ. «Ի լերինս Արարատայ» (Ծննդ. Ը, 4): Բուզանդն Արարատ անվան փոխարեն գործածում է Սարարադ ձևը: Սարարադը Կորդվաց գավառում գտնվող լեռն է: Մալխասյանցը հավանական է համարում նաև, որ Սարարադ ձևն առաջացել է երկաթագրերի սխալ տրոհումից: Շփոթություն չլինելու համար Հովհ. Ծործորեցին Արարատի փոխարեն օգտագործում է Մասիս ձևը:

Շնորհալու հետևողությամբ, նրա աշխարհայացքային-գաղափարական սկզբունքներով գրված Անանուն հեղինակի շարքում (XV–XVI դդ.) գտնում ենք պատմական թեմաներով երեք հանելուկ: Իր մտահղացումով ինքնատիպ է «Աղթամար» խորագրով հանելուկը.

Ջարմացք ասեմ ձե՛ղ, սիրելի՛ք,  
Տուն մի տեսի՛ սրբոց տեղի՛ք,  
Անդ հաւաքեալ կան շատ վայրի՛ք  
Եւ անկենդան բազում մարդիկք (էջ 402):

Հանելուկը գեղարվեստորեն կերպավորում է Աղթամարի Սբ. Խաչ տաճարը՝ կառուցված Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունու ձեռամբ 915–921 թթ.: Տաճարի ճարտարապետական բացառիկ նմուշ լինելը ընդգծվել է տարբեր աշխատություններում<sup>52</sup>: «Ջարմանագործ» արվեստով հրաշակերտված եկեղե-

<sup>50</sup> Карагезян. 2015, 112.

<sup>51</sup> Տե՛ս Բ ու զ ա ն դ. 1968, 81:

<sup>52</sup> Հայ փողովորդի պատմություն. 1976, 384, նաև Հայկական սովետական հանրագիտարան. 1974, 255:

ցին դարձել էր նաև թուվմա Արծրունու (IX–X դդ.) հիացմունքի առարկան: «Եւ քանզի ճարտարապետ արուեստին էր Մանուէլն, զոր ի վեր անդր ցուցաք, այր լի իմաստութեամբ եւ զաւրաւոր ի գործս իւր, հրաշակերտէ զեկեղեցին զարմանազործ արուեստիւ. եւ զոր վերագոյնն ցուցաք՝ կրանաւորն ձեռն տայ նկարագրել զքարինսն ճշգրտագործ նմանահանութեամբ, սկսեալ յԱբրահամայ եւ ի Դաւթէ եւ մինչեւ ցՏէր մեր Յիսուս Քրիստոս, զդասս մարգարէից եւ առաքելոց յաւրինեալ ըստ իւրաքանչիւր հանդիսի զարմանազործ տեսլեամբ»<sup>53</sup>: Պատմիչը շարունակում է նկարագրել ճարտարապետական կառույցը բոլոր մանրամասներով՝ չդադարելով զարմանալ քարի վրա «նմանահան ճշգրտութեամբ» հորինված պատկերներով: Նա առանձնացնում է հատկապես Գ. Արծրունու «փառազարդ» պատկերը և արքային օրհնող Հիսուսի քանդակը:

Առանձնահատուկ ջանքեր են պետք թվարկել առանձին գոտիներով դասակարգված անթիվ պատկերաքանդակները: Դրանք նվիրված են արաբական տիրապետության դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարին, Արծրունյաց տոհմի քաջագործություններին, շարքեր կան Հին և Նոր կտակարանների պոեմներով, աշխարհիկ թեմաներով:

Հետաքրքիր լուծում է գտել Անանունը: Նա կարողացել է և՛ կերտել եկեղեցու մանրաքանդակը, և՛ արտահայտել իր վերաբերմունքը, ընդ որում՝ դա արել է վարպետորեն, առանց առանձնացնելու որևէ քանդակ՝ ցույց տալով, որ արտասովորը ինքը՝ երևույթն է՝ տուն— սրբերի հավաքատեղի—վայրի կենդանիներ—անկենդան մարդիկ համադրությամբ:

Եկեղեցու հարթաքանդակների մեծ մասում դրոշմված է շարժումը՝ Հիսուսը փոքր-ինչ թեքվել է՝ օրհնելու Գազիկ արքային, ձիավորը նետ է արձակում արջի վրա, այգեպանը, բահը ձեռքին, այգին է ջրում, երիտասարդը պարսատիկով խփում է խաղող ուտող թռչունին, շները վազում են նապաստակի կամ այծյամի հետևից, հովազը պատառուտում է եղնիկին, աղավինները կտուց կտուցի են տվել: Օրինակները բազմաթիվ են: Հանելուկի հեղինակը հակադրել է շարժումն անշարժին՝ վայրի կենդանիներ—անկենդան մարդիկ՝ հանելուկի պատկերային հենքը կառուցելով հայկական ճարտարապետության համար անսովոր նորամուծությունն ընդգծելու շեշտադրումով: Հարթաքանդակները, առավել ևս մարդկային պատկերներով, անսովոր են եղել հայկական ճարտարապետության համար: Ե. Լալայանը գրում է. «Ինչպէս ասացինք, ամբողջ եկեղեցին ծածկուած է բարձրաքանդակներով, բաւական նուրբ, սակայն երբէք չեն կարող համեմատուիլ Անիի քանդակների հետ, նկատելի է նաև, որ թէ՛ մարդկանց և թէ՛ կենդանիների մարմնի մասերի համաչափութիւնը կատարելապէս պահպանուած չէ: Լինչի կարծիքով այս քանդակները կարող են մի նշանաւոր օղակ կազմել ասորական արուեստի և արաբական ու բիւզանդական արուեստների միջև»<sup>54</sup>:

Անանունը ձգտել է ցույց տալ հենց այս անսովորը, քանի որ չի անդրադարձել տաճարի ոչ պակաս նշանավոր, բայց հայկական արվեստի ավանդույթից բխող որմնանկարներին:

<sup>53</sup> Արծրունի եւ Անանուն. 2010, 291:

<sup>54</sup> Լալայան. 1912, 9:



«Աղթամար» հանելուկը սեղմ ու հակիրճ տողերում գեղարվեստորեն կերպարվորում է հայ և համաշխարհային ճարտարապետության պատմության մեջ նշանավոր կոթողի յուրահատուկ դրսևորումները:

Նույն շարքում գետեղված «Գրիգոր Նարեկացի» խորագրով հանելուկը ադուս կրում է Նարեկացու վարքապատմի ազդեցությունը՝ սկսած առաջին տողում Ռչտունյաց երկրի հիշատակումից.

Ոմն ի յերկրէն Ըռըշտունեաց  
 Էր յոյժ փարթամ յամէն բարեաց,  
 Նա բարեկի սեղան կազմեաց,  
 Զամենեսեան ի ճաշ կոչեաց.  
 Ով յայն հացէն ապստամբեաց,  
 Նա յաւիտեան քաղցած մնաց (Էջ 404):

Ինչպես վարքում է նշվում՝ Նարեկացին սրբության սկիզբ դրեց, և թվարկվում են նրա բանքերը՝ ցույց տալու համար, որ նա գիտության շնորհքով գերազանց է եղել<sup>55</sup>, այնպես էլ հանելուկում, նկատի ունենալով Նարեկացու գրական ժառանգությունը և արտասովոր ձիրքը՝ ասվում է՝ նա փարթամ էր բարիքներով: Հանելուկի երրորդ, չորրորդ տողերում մատնանշվում է նրա սուրբ լինելը, իր արժանիքներով հոգևոր սեղան կազմելը և բոլորին կանչելը՝ հաղորդվելու այդ սեղանին:

Հանելուկի հաջորդ տողերը հիշեցնում են տապալկած աղալիների կենդանանալու պատմությունը: Այդ դրվագն ակնարկ է այն մասին, որ չէր կարելի սուրբ Նարեկացուն մեղադրել զցած սեղանի համար: Հանելուկի ընդհանրացումը փխրաստիպական ու քրիստոնեական հրաշալի, իմաստավոր խորք, չեղտադրում ունի. ով Նարեկացու հացը չընդունեց, նա հոգևոր առումով հավիտյան քաղցած մնաց:

Հանելուկի վեց տողերում ամբողջանում է Նարեկացու կերպարն այն քիչ դրվագների միջոցով, որ հայտնի են մեզ: Նույնիսկ Նարեկացու շուրջ ծավալված ծանր միջնորդի արձագանքը կա:

Հաջորդ հանելուկը՝ «Ներսէս» խորագրով, սկզբում տարակարծությունների տեղիք է տվել: Գրիգոր Հակոբյանի կարծիքով այն գրել է Շնորհալի Ներսես Մեծի մասին<sup>56</sup>: Մինչդեռ հանելուկում ուրվագծվում է մատաղ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը հետամուտ Ներսես Շնորհալու կերպարը:

Տնտէս մի կայր խիստ պատուական,  
 Ծաշէր կազմէր յոյժ զանազան,  
 Մանկունքս ուտեն և զուարճանան  
 Եւ գիտութեամբ փարթամանան (Էջ 402):

<sup>55</sup> Տե՛ս Հայկական վարքեր և վկայաբանություններ V–XV դդ. 1998, 48:

<sup>56</sup> Հ ա կ ո բ յ ա ն. 1965, 241:

Մատնանշվող անձի հարգված ու սիրված լինելը բոլորի կողմից ակնարկվում է պատմական բառով: «Խիստ» և «յոյժ» հոմանիշների զուգակցումով առավել ընդգծվում է նրա դերն ու նշանակությունը իբրև մարդկանց սնունդի, կեցության մասին հոգ տանող տնտեսի: Հանելուկի հեղինակը ցանկացել է, որ ունկնդիրը Շնորհալուն հիշի մասնավորապես մանուկ, երիտասարդ սերնդի վրա ունեցած իր ազդեցությունը, որովհետև նրա գրվածքները թե՛ գիտելիք են տվել մանուկներին, թե՛ իբրև հոգևոր սնունդ՝ ձևավորել նրանց հոգևոր աշխարհը:

Անանունը թերևս թեմատիկ խմբավորում չի կատարել, որովհետև «Աղթամար» հանելուկին հաջորդում է «Ներսէս» հանելուկը, «Նարեկացի» հանելուկը տեղադրված է մի քանի հանելուկից հետո: Սակայն ընտրած նյութը, կերպարները, նրանց գնահատությունը խոսում են հեղինակի աշխարհայեցողության, գեղարվեստական ճաշակի և հոգևոր կյանքի հետ կապ ունենալու մասին:

Այդ երեք հանելուկները շաղկապվում են իրենց մեջ ամփոփված ներքին խորհրդով՝ իբրև սկիզբ ու հեղաբեկում, իբրև նորարարություն, իբրև հոգևոր վերելքի անկրկնելի երևույթներ հայ և համաշխարհային մշակույթի մեջ. Նարեկացին՝ հոգևոր սլացքով դեպի անհաս բարձունքները, Շնորհալին՝ նոր մտածողությամբ, բարոյական նկարագրով ամենքին մոտ ու հարազատ, սիրելի ու ընդունելի, և Աղթամարի Սուրբ Խաչ տաճարը՝ ավանդականի ու նորի համադրությամբ՝ իբրև բարձրաշուք մի վեհություն՝ խոնարհումի արժանի:

Գտնվելով Շնորհալու ազդեցության շրջանակում՝ Ծործորեցին և Անանունը քառատողի մեջ ամփոփել են մի ամբողջական իմաստավոր պատմություն՝ համապատասխան գնահատականներով ու արժեքներով՝ խիստ կարևորելով հանելուկի միջոցով փոխանցվող ասելիքի փիլիսոփայությունը:

### Եզրակացություն

Առաջին հեղինակը, ով հայոց պատմության թեմաներով հանելուկներ է գրել, Ներսես Շնորհալին է: Նա կատարել է հանելուկների թեմատիկ խմբավորումներ: Նրա հանելուկներն առանձնահատուկ նշանակություն ունեն բանաստեղծի գաղափարական հայացքներն ըմբռնելու առումով: Առաջին խմբում հերոսներն առասպելական ուժով օժտված հզոր դյուցազուններն են: Երկրորդ խմբի հանելուկները կերպավորում են քրիստոնեական հավատի ու մշակույթի հետ կապվող նշանավոր անհատներին:

Ակնառու է Շնորհալու միտումը. Տորքը, Վարազդատն ու Տրդատը ուժի ու զորավոր ոգու մարմնացում են, Գրիգոր Լուսավորիչը, Դավիթ Անհաղթն ու Մովսես Խորենացին՝ ազգային-հոգևոր վերելքի ակունքներում կանգնած և այդ վերելքին ու լուսավորությանը ճանապարհ հարթած մտածողներ: Մի խումբը՝ ֆիզիկական, մյուսը՝ հոգևոր ուժով, համաշխարհային պատմության կերպարների հետ զուգահեռներով ամրագրում են իրենց արժանի տեղն ու դերը հայոց պատմության հարահոսում:

Շնորհալին իր քրիստոնեական աշխարհընկալմամբ ու ազգային մտակերտվածքով կատարել է պատմական աղբյուրներից ընտրված կենսագրական դրվագների նրբին, գրեթե անորսալի վերաիմաստավորումներ, որոնք իրենց ազդեցությունն են թողնում հետագա հեղինակների վրա: Տիրատուր վարդա-

պետի հերոսներն արդեն զերծ են հեղինակային որևէ կանխակալ վերաբերմունքից: Նրանք անսքող հիացմունք առաջացնող, գովասանքի արժանի քաջագուններ են: Անգամ չար աչք ունեցող երվանդի կերպարում չի նկատվում ընդգծված բացասական երանգավորում:

Հովհ. Ծործորեցու՝ «Մասիս» խորագրով հանելուկը՝ գրված Շնորհալու գաղափարական և գեղագիտական հայացքների ազդեցությամբ, լեռան հոգևոր խորհուրդն է բացահայտում հայ ժողովրդի ծագումը դեպի համաշխարհային պատմության սկիզբ տանելով:

Շնորհալու ավանդների շարունակությամբ են ստեղծվել Անանունի (XV–XVI դդ.) պատմական հանելուկները: Հեղինակը պատկերել է նշանավոր կոթող Աղթամարի Սբ. Խաչ տաճարի յուրօրինակ դրսևորումները, կերպավորել առաջադեմ մտածողներ Գրիգոր Նարեկացուն և Ներսես Շնորհալուն, ովքեր խորապես նպաստել են հայ ժողովրդի հոգևոր-բարոյական վերելքին:

Հերիքնազ Որսկանյան – բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ հին և միջնադարյան գրականության բաժնի ավագ գիտաշխատող, փոխտնօրեն: Գիտական հետաքրքրությունները՝ հայ հին և միջնադարյան գրականություն, հայ դասական գրականություն: Հեղինակ է 1 մենագրության և շուրջ 30 հոդվածի:  
vorskanyan.heriknaz@mail.ru

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 1899, Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մէջ (քննադատութիւն եւ ուսումօք), Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 602 էջ:

Աբեղյան Մ. 1946, Հայոց հին գրականության պատմություն. Գիրք Բ (XI–XIX դարի 30-ական թթ.), Երևան, Հայկ. ՍՍՌ գիտությունների ակադ. հրատ., 600 էջ:

Ալիշան Ղ. 1849, Մովսէս Քերթոզահայր Հայոց.– «Բազմավէպ» (Վենետիկ), էջ 51–54:

Ալիշան Ղ. 1869, Յուշիկք հայրենեաց հայոց, հ. Բ, Վենետիկ, տպ. Ս. Ղազար, 573 էջ:

Ալիշան Ղ. 1873, Շնորհալի եւ պատագայ իւր, Վենետիկ – Ս. Ղազար, էջ 539:

Աճառյան Հր. 1942, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա., Երևան, Պետական համալսարանի հրատ., 634 էջ:

Այնթաբյան Փ. 1951, Ներսես Շնորհալու անտիպ հանելուկները .– «Էջմիածին» (Էջմիածին), սեպտեմբեր–հոկտեմբեր, էջ 61–64:

Արիկյան Վ. 2015, Սուրբ Էջմիածինը արվեստում, Երևան, տպ. «Տիգրան Մեծ», 192 էջ:

Թովմա Արծրունի եւ Անանուն. 2010. – Մատենագիրք Հայոց, հ. ԺԱ, Ժ. դար, Պատմագրություն երկու գրքով, գիրք Ա., Անթիլիաս–Լիբանան, 795 էջ:

Լալայեան Ե. 1912, Վասպուրական. Նշանաւոր վանքեր, Ա. պր. (Արտատպուած «Ազգագրական Հանդէսից»), Թիֆլիս, Էլէքտրատպ. օր. Ն. Աղանեանցի, Պօլից. 7, 100 էջ:

Խաչիկյան Լ. 1973, Արտագի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը.– «Բանբեր Մատենադարանի», № 11, էջ 125–210:

Կիրակոս Գանձակեցի. 1961, Պատմություն Հայոց, աշխատ.՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադ. հրատ., 427 էջ:

Հակոբյան Գ. 1965, Ներսես Շնորհալի, Երևան, Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադ. հրատ., 300 էջ:

Հայ ժողովրդի պատմություն. 1984, հ. II, Երևան, Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադ. հրատ., 690 էջ:

Հայ ժողովրդի պատմություն. 1976, հ. III, Երևան, Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադ. հրատ., 1032 էջ:

Հայկական սովետական հանրագիտարան. 1974, հ. I, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, էջ 720:

Հայկական վարքեր և վկայաբանություններ V–XV դդ.. 1998, Երևան, «Նաիրի» հրատ., 432 էջ:

Հարությունյան Ս. 1985, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 392 էջ:

Սկրտիչ Էմին. 1886, Մովսէս Խորենացին եւ հայոց հին վէպերը, Թիֆլիս, Մով. Վարդանեանի տպ., 85 էջ:

Մնացականյան Ա. 1980, Հայ միջնադարյան հանելուկներ (V–XVIII դդ.), Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 522 էջ:

Մովսէս Խորենացի. 1991, Պատմութիւն հայոց, քննական բնագիրը և ներածությունը Ս. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 485 էջ:

Ներսէս Շնորհալի. 1981, Վիպասանութիւն, քննական բնագրերը պատրաստեց, ծանոթագրեց և առաջաբանը գրեց՝ Մանիկ Մկրտչյան, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 164 էջ:

Պատմութիւն Ագաթանգեղայ. 1862, Վենետիկ, տպ. Ս. Ղազար, 678 էջ:

Փաւստոս Բիւզանդ. 1889, Պատմութիւն Հայոց ի չորս դպրութիւնս, Վենետիկ, ի տպ. սրբոյն Ղազարու, 290 էջ:

Փաւստոս Բուզանդ. 1968, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադ. Ստ. Մախասյանցի, Երևան, «Հայաստան» հրատ., 352 էջ:

Карагезян Г. 2015, Арарат – сакральная территория: по запискам европейских путешественников. Ереван, Изд-во «Гитутюн» НАН РА, 258 с.

## СРЕДНЕВЕКОВЫЕ ЗАГАДКИ НА ТЕМЫ ИСТОРИИ АРМЕНИИ

ЭРИКНАЗ ВОРСКАНЯН

### Резюме

*Ключевые слова: лично-письменные загадки, А. Мнацаканян, Н. Шнорали, история Армении, Тиратур вардапет (архимандрит), Ов. Цорцореци, Безымянный, Агатагелос, П. Бюзанд, М. Хоренаци, Арируни, Гандзакеци.*

Первым автором, который написал загадки, связанные с историей Армении, был известный армянский средневековый автор, общественный и церковный деятель Нерсес Шнорали (XII в.). Он сгруппировал загадки по темам. Исторические фигуры из первой группы его загадок на темы армянской истории связаны с дохристианским периодом и с четвертым веком. Они наделены мифической силой и формируют могучую силу и дух народа. Во вторую группу загадок входят выдающиеся деятели, связанные с христианской верой и культурой, которые начали и проложили путь для просвещения и духовно-нравственного роста народа. Шнорали в основном остался верен использованным источникам – это историки-хронографы Агатангелос, Павстос Бюзанд, Мовсес Хоренаци; он лишь слегка интерпретировал и переосмыслил их тексты.

Фрагменты, взятые из «Истории Армении» Мовсеса Хоренаци, почти в точности воспроизведены автором XIV века архимандритом Тиратуром. На него большое влияние оказал Шнорали. Тиратур даже в вопросе выбора исторических личностей следовал за ним. Для Тиратура важно было представить героев своих загадок отважными храбрецами, чья физическая сила достойна только похвалы.

Ованес Цорцореци (XIII–XIV вв.) придумал только одну загадку на историческую тему. Загадка под названием «Масис» отразила народное представление о том, что гора Масис – это чрево мира, граница неба и земли. Автор также использовал источники Бюзанда.

Придуманные в XV–XVI веках загадки «Ахтамар», «Григор Нарекаци», «Нерсес» (XV–XVI вв.), автор которых неизвестен, были созданы по идейному принципу Шнорали. В «Ахтамаре» художественно-изобразительными средствами представлены уникальные характерные черты памятника, значимого для истории как армянской, так и мировой архитектуры. Крестовоздвиженский храм Ахтамара был построен в 915–921 гг. Историк Фома Арцруни (IX–X вв.) с восхищением описывает этот храм. Загадка «Григор Нарекаци» была придумана под влиянием житий Нарекаци. Его образ полностью раскрывается в шести строчках загадки. Подчеркивается святость Нарекаци и то, что он обладал незаурядным литературным талантом. В загадке «Нерсес» очерчен образ Нерсеса Шнорали, занимающегося образованием и воспитанием подрастающего поколения.

Все авторы, вслед за Нерсесом Шнорали, рассматривали загадку как эффективный способ воздействия на широкую публику, глубоко понимая смысл и философию всего того, что передавалось через загадку.

*Эрикназ Ворсканян – к. филол. н., старший научный сотрудник отдела древней и средневековой армянской литературы Института литературы им. М. Абегамяна НАН РА, заместитель директора. Научные интересы: древняя и средневековая армянская литература, классическая армянская литература. Автор 1 монографии и около 30 статей.*

*vorskanyan.heriknaz@mail.ru*

MEDIEVAL RIDDLES ON THE TOPICS OF  
ARMENIAN HISTORY

HERIKNAZ VORSKANYAN

## Summary

*Key words: personal-writing riddles, A. Mnatsakanyan, N. Shnorhali, Armenian history, Tiratur vardapet (archimandrite), Hovh. Tsortsoretsi, Anonymous, Agatangeghos, Buzand, Khorenatsi, Artsruni, Gandzaketsi.*

The first author who wrote riddles on the theme of the Armenian history was the well-known author of medieval Armenian literature, Catholicos Nerses Shnorhali (XII c.). He thematically grouped riddles. The historical figures of the first group of his riddles are connected with the themes of Armenian history of the pre-Christian period and of the fourth century. They are endowed with mythical power and form the mighty strength and spirit of the people. The second group of riddles includes prominent figures associated with the Christianity and culture, who began and paved the way for the Enlightenment and spiritual and moral growth of the people. The article shows that Shnorhali basically remained faithful to the sources used such as the chronographers-historians Agatangeghos, Pavstos Buzand, Movses Khorenatsi, he only slightly interpreted and revised their texts.

The episodes taken from Movses Khorenatsi's "History of Armenia" are almost identically depicted in the same way by the 14th century author Archimandrite Tiratur. Shnorhali had a great influence on him. Tiratur even followed him in the choice of historical figures. For Tiratur, it was important to present the heroes of his riddles as courageous brave men, whose physical strength is only worthy of praise.

Hovhannes Tsortsoretsi (XIII-XIV cc.) created only one riddle on a historical theme. The riddle entitled "Masis" reflected the popular perception that Mount Masis is the womb of the world, the border of Heaven and Earth. The author of the riddle also used Buzand's work.

The riddles "Akhtamar", "Grigor Narekatsi", "Nerses" (XV-XVI cc.), whose author is unknown, were created according to the ideological principle of Shnorhali. In "Akhtamar", the unique characteristic features of the monument, significant for the history of both Armenian and world architecture, are presented by stylistical devices. Akhtamar Church of Exaltation of the Cross was built in 915-921. Historian Thomas Artsruni (IX-X cc.) describes this temple with admiration. The riddle "Grigor of Narekatsi" was created under the influence of Narekatsi's hagiography. His character is fully revealed in six lines of the riddle. The sanctity of Narekatsi and the fact that he was of outstanding literary talent were emphasized. In the riddle "Nerses" the character of Nerses

Shnorhali, who is engaged in the education and upbringing of the younger generation, is outlined.

All the authors, following Nerses Shnorhali, considered the riddle as an effective way of influencing the wide social strata and they strongly understood the meaning and philosophy of everything that was transmitted through the riddle.

*Heriknaz Vorskanyan – Candidate of Sciences in Philology, Senior Researcher at the Department of Ancient and Medieval Armenian Literature of the NAS RA Institute of Literature after M. Abeghyan, Deputy Director of the Institute of Literature. Scientific interests: Armenian ancient and medieval literature, classical Armenian literature. Author of 1 monograph and around 30 articles. vorskanyan.heriknaz@mail.ru*